«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Ուրարտու ՖԱ» ՄՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcurartu.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31.03.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նազելի Արսենյան
	Նարեկ Ադամյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	13Գ-017
Խախտում՝	«Ուրարտու-12-1» թիմի ֆուտբոլիստ Արեն Գալստյանի (48696) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Զ, 15-րդ կետ)
Առաջնություն՝	ՀՀ ֆուտբոլի 2024-2025թթ. մինչև 13 տարեկանների գավաթի խաղարկություն
Խաղ՝	«Փյունիկ-12-2» - «Ուրարտու-12-1», 22.03.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Ուրարտու-12-1» թիմի ֆուտբոլիստ Արեն Գալստյանին (48696) որակազրկել 5 (հինգ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 22-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Ուրարտու-12-1» թիմի ֆուտբոլիստ Արեն Գալստյանի (48696) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի մայիսի 22-ը ներառյալ:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 13-րդ հոդվածի 21-րդ կետը՝ որակազրկումը տարածվում է ՀՖՖ կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր մրցումների վրա:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: